ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 243-Կ/3 «27» 11 2024թ.

«ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/107» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը առ այն, որ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ (ներկայացված հայտում առկա չեն եղել հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես ներկայացված չի եղել տեխնիկական բնութագրին կից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը), որոնք շտկման համար սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկելուց հետո կրկին չի համապատասխանել հրավերի պահանջներին (ներկայացված բացակայող տեխնիկական առաջադրանքը եղել է թերի՝ 1.9 կետում նշված պահանջը, որ ծրագրային ապահովումը պետք է ունենա բազմալեզու ինտերֆեյս /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ ներկայացվել է միայն ռուսերեն և անգլերեն ինտերֆեյսով), ինչով պայմանավորված «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02896992, գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Վարդանանց փ., 18/2) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

11/27/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**